ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ԽԱՉԱՏՐՅԱՆ Կ. Գ.

Հայաստանի Հանրապետության տնտեսության գլոբալ ձևափոխումը շուկայականի օբյեկտիվ պայմաններ ստեղծեց ձեռնարկատիրության զարգացման համար: ՀՀ-ում յուրաքանչյուր ոք ունի օրենքով չարգելված ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք[1]:

Տնտեսագիտական գրականության մեջ ձեռնարկատիրության խնդիրը շատ հաճախ դիտարկվում է լոկ մեկ տեսանկյունից, այն է՝ ձեռնարկատիրության թվին դասվում է միայն մասնավոր հատվածում գործող անհատական կազմակերպությունների գործունեությունը: Սակայն ձեռնարկատիրության տարրերը կարող են կիրառվել նաև տնտեսության այլ հատվածներում: Ներկայումս ձեռնարկատիրության դերը և նշանակությունը տնտեսական աճի մեջ հատուկ կարևորություն է ստանում: Հիմնականում դրան նպաստել են մասնավորեցման ծրագիրը և տնտեսության պետական հատվածի մասնավորեցումը, սեփականատիրության բազմազան ձևերի զարգացումը: Հայտնի է, որ ըստ սեփականության ձևերի տարբերակվում է ձեռնարկատիրության երկու հիմնական տեսակ՝ մասնավոր և պետական: Շուկայական հարաբերությունների անցման ժամանակ կարևորագույն խնդիրն այս երկուսի լավագույն հարաբերակցության որոշումն է: Ստորև գրաֆիկ 1-ում ներկայացված է ՀՀ տնտեսությունում մասնավոր հատվածի մասնաբաժնի դինամիկան: Ըստ դրա՝ 2004 թ. սկսած՝ մասնավոր հատվածի տեսակարար կշիռը անփոփոխ է և կազմում է 84%: Սա թերևս վկայում է այն մասին, որ ՀՀ-ում պետական և մասնավոր հատվածների հարաբերակցության հարցը լուծված կարելի է համարել:

Հայաստանի Հանրապետությունում շուկայական հարաբերությունների անցման սկզբնական փուլում մասնավորեցման գործընթացին զուգընթաց ընդունվեցին այնպիսի իրավական ակտեր, որոնցով սահմանվում էին ձեռնարկատիրական սուբյեկտների հնարավոր կազմակերպաիրավական ձևերը, և տրվում էին դրանց բնորոշումները: Անկասկած, ձեռնարկատիրության զարգացման համար խիստ կարևոր է ապահովել ձեռնարկությունների կազմակերպական-իրավական ձևերի բազմազանությունը: ՀՀ-ում ձեռնարկատիրության ներկա վիճակը անհրաժեշտ է դարձնում ուսումնասիրել տարբեր կազմակերպաիրավական ձևեր ունեցող ձեռնարկությունների հարաբերակցությունը և ուշադրություն սևեռել ժամանակի

---

[1] ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 33.1 (ՀՀ պաշտոնական տեղեկագիր, հատուկ թողարկում, 5 դեկտեմբերի 2005), Ե., էջ 4:

ընթացքում դրա փոփոխություններին: Այսպես՝ աղյուսակ 1-ում ներկայացված է իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի քանակը՝ ըստ կազմակերպական-իրավական ձևերի 2005 թ., 2006 թ. և 2010 թ. դրությամբ:

Գրաֆիկ 1

Մասնավոր հատվածի տեսակարար կշիռը
ՀՀ տնտեսությունում 2002-2009թթ. (%)[2]



Նախ նկատենք, որ դիտարկվող ժամանակահատվածում թե՛ իրավաբանական անձանց, թե՛ անհատ ձեռնարկատերերի քանակն աճել է, ինչը խոսում է ձեռնարկատիրական միջավայրի շարունակա- կան զարգացման մասին: Սակայն միևնույն ժամանակահատվա-ծում կազմակերպաիրավական որոշ ձևերով ձեռնարկությունների քանակը կրճատվել է, օրինակ՝ պետական ձեռնարկությունների, ՊՓԲԸ-ների, դուստր ընկերությունների, լիակատար տնտեսական ընկերակցությունների, անհատական ձեռնարկությունների և այլն: Առաջին երկուսի պարագայում դա կարելի է մեկնաբանել որպես շարունակվող մասնավորեցման գործընթացի հետևանք:

Աղյուսակ 1

Իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանում առկա իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի քանակը՝
ըստ կազմակերպական-իրավական ձևերի[3]

Անվանումը	քանակը 01.01.2005թ. դրությամբ	քանակը 01.01.2006թ. դրությամբ	քանակը 01.03.2010թ. դրությամբ
Անհատական ձեռնարկություն	7664	7498	7181
Ընտանեկան ձեռնարկություն	545	542	529

[2] *Տե՛ս www.smednc.am*

[3] *ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2005 թ. հունվար-դեկտեմբերին, ՀՀ ԱՎԾ, 2006: ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2010 թ. հունվար-փետրվարին, ՀՀ ԱՎԾ, 2010:*

Լիակատար տնտեսական ընկերակցություն	1316	1274	1155
Կոմանդիտային տնտեսական ընկերակցություն	8	8	8
Դուստր ընկերություն	1019	980	554
Արտադրական կոոպերատիվ	5473	5333	5009
Գյուղացիական կոլեկտիվ տնտեսություն	245	240	232
ՍՊԸ	30667	32057	41992
ՓԲԸ	3074	3057	3219
որից՝			
բոլոր բաժնետոմսերը պատկանում են պետությանը	*808*	*751*	*658*
բոլոր բաժնետոմսերը պատկանում են համայնքներին	*415*	*403*	*338*
ԲԲԸ	1077	1021	928
Պետական ձեռնարկություն	313	298	230
Առևտրային իրավաբանական անձանց միություն	79	81	94
Ընդամենը	**51480**	**52389**	**61131**
Անհատ ձեռնարկատեր	67116	71562	77117

ՀՀ ձեռնարկատիրության զարգացման առանձնահատկություններից մեկը բաժնետիրական ընկերությունների փոքր տեսակարար կշիռն է: Դա թերևս ազգային հոգեմտակերտվածքի հետևանք է: Ակնհայտ է, որ հայերը «վախենում» են մեծ թվով փայատերերի հետ համատեղ բիզնես վարելուց: Մինչդեռ բաժնետիրական ընկերությունները կարևոր նշանակություն ունեն ձեռնարկատիրության զարգացման առումով, հատկապես արժեթղթերի շուկայի: Կարծում ենք, որ լուրջ քայլեր է պետք ձեռնարկել ՀՀ-ում կորպորատիվ կառավարման մշակույթը զարգացնելու համար: Փոխարենը ՀՀ-ում բավական մեծ է անհատ ձեռնարկատերերի (ԱՁ) ու սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների (ՍՊԸ) քանակը: Գրաֆիկ 2-ում ներկայացված են 2010թ. մարտի 1-ի դրությամբ ՀՀ-ում գրանցված ԱՁ-երի և որոշ իրավաբանական անձանց քանակները:

Գրաֆիկ 2-ը առավել պարզորոշ ցուցադրում է Հայաստանում կորպորատիվ մշակույթի բացակայությունը: Նախ բաժնետիրական ընկերությունների քանակն ավելի քան 10 անգամ պակաս է սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններից և 18.5 անգամ՝ անհատ ձեռնարկատերերի քանակից: Բացի դա՝ բաժնետիրական ընկերությունների միայն 22.4%-ն է բաց: Մինչդեռ, ինչպես արդեն նշեցինք, ձեռնարկատիրության զարգացման համար կարևոր նշանակություն ունեցող արժեթղթերի շուկայի զարգացման համար հույժ կարևոր են բաց

բաժնետիրական ընկերությունների քանակի ավելացումը և նրանց դերի բարձրացումը:

Երկրում ձեռնարկատիրության զարգացման համար նախադրյալների ստեղծման առումով կարևոր են համապատասխան օրենսդրահիրավական դաշտի առկայությունը, ձեռնարկատերերի իրավական պաշտպանվածությունը: Հայաստանի Հանրապետությունում մասնավոր ընկերությունների իրավական հիմքերն ամրագրված են ՀՀ Սահմանադրությամբ, Քաղաքացիական և Քրեական օրենսգրքերով, ինչպես նաև այլ օրենքներով և իրավական ակտերով:

Գրաֆիկ 2

ՀՀ-ում գրանցված ԲԲԸ, ՓԲԸ, ՍՊԸ և ԱՁ քանակները 01.03.2010 թ. դրությամբ[4]



Ձեռնարկատիրական միջավայրի բաղադրատարրերից են շուկայական ենթակառուցվածքները՝ ֆինանսական, բանկային, ապահովագրական, մրցակցության պաշտպանության համապատասխան կառույցները:

Ձեռնարկատիրական միջավայրի կարևորագույն հատկանիշներից է նաև երկրում առողջ մրցակցային մթնոլորտի առկայությունը: Հայաստանի տնտեսությունում այս իմաստով դեռ լուրջ անելիքներ կան: Գաղտնիք չէ, որ ՀՀ-ում ձեռնարկատիրական գործունեության ոլորտի առանձնահատկություններից մեկը նրա մոնոպոլիզացված լինելն է, այսինքն՝ այսօր տնտեսության բազմաթիվ ոլորտներում ձեռնարկատերերը գործում են մեկ կամ մի քանի անձով: Այս պարագայում է՛լ ավելի է կարևորվում հակամենաշնորհային քաղաքականությանը և մրցակցության պաշտպանությանն ուղղված միջոցառումների իրականացումը պետության կողմից: «Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են տնտեսական գործունեության ազատությունն ու ազատ տնտեսական մրցակցությունը»[5]:

Գրեթե բոլոր երկրներում տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության իրականացման նպատակով ստեղծված է տնտեսական մրցակցության պաշտպանության մարմին՝ կոմիտե, հանձնաժողով, խորհուրդ և այլն, կամ այդ գործառույթները փոխանցվում են արդեն

[4] ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2010 թ. հունվար-փետրվարին, ՀՀ ԱՎԾ, 2010:

[5] ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 8, էջ 4:

գոյություն ունեցող մարմնի[6]: Պետական նմանօրինակ մարմինների գլխավոր խնդիրը տվյալ բնագավառում բոլոր կառուցվածքների գործունեության համակարգումն է, առևտրային կազմակերպությունների վրա ազդելու առաջարկությունների մշակումը, տնտեսության ճյուղերում ձեռնարկատիրության տարբեր ծրագրերի վերլուծությունն ու գնահատումը: Հայաստանի Հանրապետությունում նման մարմին է տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը:

ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը միջամտում է նաև տարածքային ապրանքային շուկաներում մրցակցային միջավայր ձևավորելու գործընթացին՝ դրանով իսկ աջակցելով ձեռնարկատիրության զարգացմանը:

Մենաշնորհային գործունեության սահմանափակմանն ուղղված պետական հակամենաշնորհային քաղաքականությունը պետք է նպաստի ազատ մրցակցության ընդլայնմանը և այն դարձնի առավել կատարյալ: Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է.

- շուկայում վերահսկել մենաշնորհների վարքագիծը, իջեցնել մենաշնորհային գները մինչև գների մակարդակի կարգավորումը, չթույլատրել գների սահմանման վերաբերյալ գաղտնի կամ բացահայտ պայմանավորվածությունները մենաշնորհների միջև,

- հասարակական հարստության ու ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով արգելել խոշոր ընկերությունների կողմից փոքր ձեռնարկությունների կլանումը, միաձուլումը և միավորումը:

Այսպիսով, հակամենաշնորհային օրենսդրությունը պետք է ձգտի մի կողմից կարգավորել գները, բարելավել տնտեսության կառուցվածքը, նպաստել ռեսուրսների արդյունավետ բաշխմանն ու օգտագործմանը, մյուս կողմից՝ արգելել մենաշնորհային այնպիսի գործունեությունը, որը կարող է հասարակության համար բացասական հետևանքներ ունենալ:

Ձեռնարկատիրության զարգացման առումով առանձնահատուկ կարևորություն ունեն արժեթղթերի շուկան և դրա հետ անմիջականորեն կապված ֆոնդային բորսաները: 2007 թ. նոյեմբերին ՀՀ կառավարության և շվեդական OMX ընկերության միջև կնքվեց համաձայնագիր, ըստ որի՝ շվեդական ընկերությանը հանձնվեց Հայաստանի ֆոնդային բորսան և կենտրոնական դեպոզիտարիան: Սա թերևս Հայաստանում կապիտալի շուկայի զարգացման համար ամենակարևոր քայլն էր:

Գաղտնիք չէ, որ ձեռնարկատիրության զարգացման գործում էական նշանակություն ունի նաև բանկային համակարգը, քանի որ բանկերը, լինելով ֆինանսական շուկայի մասնագիտացված կառույցներ, կենտրոնացնում են տնտեսության մեջ առկա ազատ դրամական միջոցները և տեղաբաշխում դրանք: Ինչ

---

[6] **Разу М. Л., Цветков И. В.** *Договорная работа: организация, технология, управление, учеб. пособие, М., 2005, с. 74.*

վերաբերում է բանկային համակարգին, ապա այն այսօր ՀՀ-ում համարվում է տնտեսության կայացած ոլորտներից մեկը:

Ցանկացած երկրում ձեռնարկատիրության վիճակը վերլուծելիս անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել փոքր և միջին ձեռնարկատիրությանը, նրա մասնաբաժնին, զարգացման հնարավորություններին և ՓՄՁ պետական աջակցությանը: Ներկայումս տնտեսապես զարգացած երկրներում միլիոնավոր փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներ, խոշոր ձեռնարկությունների հետ փոխկապակցված, ձևավորում են շուկայական տնտեսության ինքնակարգավորման հատուկ մեխանիզմ[7]: ՓՄՁ-ների արդյունավետ գործունեությունը տնտեսության զարգացման համար ստեղծում է նպաստավոր պայմաններ, խթանում է մրցակցությանը, նպաստում գործազրկության կրճատմանը, արդյունավետ են օգտագործվում տեղական ռեսուրսները, գիտատեխնիկական առաջընթացի հնարավորությունները, ձեռնարկատիրությամբ զբաղվելու հնարավորությունները, անհատի ստեղծագործական կարողությունները:

Հայաստանը մինչև անկախանալը գրեթե չի ունեցել փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման ավանդույթներ: Այս առումով փոքր և միջին ձեռնարկատիրության կազմավորումը շուկայական հարաբերությունների հաստատման սկզբնական փուլում էական նշանակություն ունեցավ, իսկ ՓՄՁ արդյունավետության բարձրացումը տնտեսական զարգացման ներկա փուլում, կարծում ենք, խիստ արդիական է: Այն պահանջում է տվյալ բնագավառում առկա իրավիճակի վերլուծության և համաշխարհային փորձի ուսումնասիրության արդյունքների հիման վրա գնահատել փոքր և միջին կազմակերպությունների դերը հանրապետության ընդհանուր տնտեսական զարգացման գործում, ինչպես նաև մշակել մոտեցումներ տվյալ բնագավառի հետագա զարգացման համար և որոշել դրանում պետական աջակցության հիմնական ուղղությունները:

Ըստ էության, բոլոր երկրներում մշակվել և իրականացվում են ՓՄՁ զարգացման հատուկ պետական քաղաքականություն և ռազմավարություն, իսկ մի շարք երկրներում, նաև ՀՀ-ում, ընդունվել է ՓՄՁ-ների զարգացման վերաբերյալ օրենք, որոնք կարգավորում են դրանց գործունեությունը և նպաստում ոլորտի զարգացմանը: Բնականաբար, թե՛ մշակված ռազմավարություններում, թե՛ ընդունված օրենքներում առաջնահերթ ներկայացվում են ՓՄՁ չափորոշիչները, այսինքն՝ ո՞ր ընկերությունն է համարվում «փոքր» կամ «միջին»:

Տնտեսապես զարգացած երկրներում ՓՄՁ ոլորտը հիմնականում կանխորոշում է տնտեսական աճի տեմպերը՝ համախառն ներքին արդյունքի կառուցվածքում կազմելով 50-60%, իսկ որոշ ճյուղերում՝ մինչև 70-80%[8]: Միաժամանակ ՓՄՁ-ները զարգացած երկրներում կազմում են տնտեսավարող սուբյեկտների ընդհանուր թվա-

---

[7] **Хойер В.** *Как делать бизнес в Европе, М., 2002, с. 41.*

[8] **Jobber David H., Lancaster Geoff M.** *Selling and Sales Management, 5th edition, Harlow, 2000, p. 64.*

քանակի 97-99%-ը: Ըստ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) տվյալների՝ Ֆրանսիայի և Իտալիայի կազմակերպությունների ընդհանուր թվաքանակում ՓՄՁ-ները կազմում են 99,8%-ը, Ճապոնիայում՝ 99,7%-ը, Շվեյցարիայում՝ 99%-ը: ՓՄՁ ոլորտը նշանակալի դեր ունի նաև այդ երկրներում զբաղվածության ապահովման գործում: Այսպես՝ Ֆրանսիայում ՓՄՁ-ներում զբաղված են 7,9 մլն մարդ, որը կազմում է տնտեսապես ակտիվ բնակչության 65%-ը, իսկ Ճապոնիայում՝ 31,2 մլն մարդ, որը կազմում է աշխատատեղերի 69,5%-ը: Այս ցուցանիշը Շվեյցարիայում հասել է 69,1%-ի, Գերմանիայում՝ 70%-ի, իսկ Իսպանիայում՝ 80%-ի[9]:

Ստորև աղյուսակ 2-ում ներկայացված է ՀՀ տնտեսությունում ՀՆԱ-ի և ընդհանուր զբաղվածների մեջ ՓՄՁ տեսակարար կշիռը վերջին 8 տարիների ընթացքում: Տվյալները վկայում են, որ ՓՄՁ դերը ՀՀ-ում էապես ցածր է՝ համեմատած զարգացած երկրների հետ: Եթե զարգացած երկրներում ՓՄՁ-ներում զբաղված է ընդհանուր զբաղվածների 65-80%-ը, ապա Հայաստանում այդ ցուցանիշը մոտ 42% է: Աղյուսակ 2-ի տվյալներից ակնհայտ է նաև, որ վերջին 8 տարիների ընթացքում ՀՀ տնտեսությունում ՓՄՁ-ի դերն էապես աճել է: Այսպես՝ 2002-2009 թթ. յուրաքանչյուր տարի ՓՄՁ ոլորտի մասնաբաժինը ՀՆԱ-ի մեջ անշեղորեն աճել է՝ 34,4%-ից հասնելով 42,5%-ի, այսինքն՝ վերջին 8 տարիների ընթացքում ՀՆԱ-ի մեջ ՓՄՁ տեսակարար կշիռն ավելացել է շուրջ 24%-ով: Նույն կերպ աճել է ՓՄՁ-ի դերը զբաղվածության ապահովման գործում: 2002-2009 թթ. ընթացքում զբաղվածության մեջ ՓՄՁ մասնաբաժինը յուրաքանչյուր տարի ավելացել է 3-15%ով՝ 2002-ի 28,2%-ից 2009-ին դառնալով 42,2%:

Աղյուսակ 2

ՓՄՁ մասնաբաժինը ՀՆԱ-ի և զբաղվածության մեջ ՀՀ-ում 2002-2009 թթ.

Տարի	ՓՄՁ ոլորտի տես. կշիռը ՀՆԱ-ի մեջ (%)	ՓՄՁ ոլորտում զբաղվածների տես. կշիռը զբաղվածների ընդ. քանակում (%)
2002	34,4	28,2
2003	36,5	31
2004	38,6	32,9
2005	39,8	34
2006	40,3	35,1
2007	41	40,7
2008	41,7	42,1
2009	42,5	42,2

[9] **Կարապետյան Ի., Պետրոսյան Գ.,** *Միջազգային պրակտիկայում բիզնեսի աջակցության մի քանի հարցերի շուրջ, ՀՀ սոցիալ-տնտեսական արդի հիմնախնդիրները, գիտ. հոդվ. ժողովածու, 2, Ե., 2004, էջ 245:*

Փաստորեն, աղյուսակ 2-ից ակնհայտ է, որ վերջին տարիներին ՓՄՁ ոլորտը բավական զարգացել է, իսկ զարգացման դինամիկան թույլ է տալիս կանխատեսել, որ այդ աճը հետագա տարիներին է՛լ ավելի բարձր տեմպեր կապահովի:

Գրաֆիկ 3-ում ներկայացված են 2009 թ. ՀՀ տնտեսության հիմնական ճյուղերի թողարկման ծավալների մեջ ՓՄՁ և խոշոր ձեռնարկությունների տեսակարար կշիռները. բոլոր ճյուղերում առնըվազն կեսից ավելին թողարկում են խոշոր ձեռնարկությունները, իսկ ՓՄՁ-ի մասնաբաժինը մեծ է միայն առևտրի ոլորտում (49.4%): Ուշագրավ է, որ դիտարկվող ճյուղերում թողարկման ծավալներով 2-րդը փոքր ձեռնարկություններն են, բացառությամբ առևտրի, որտեղ 2-րդ տեղում գերփոքր ձեռնարկություններն են:

Գրաֆիկ 3

ՀՀ տնտեսության որոշ ճյուղերի թողարկման կառուցվածքը՝
ըստ ՓՄՁ և խոշոր ձեռնարկությունների 2009 թ. (%)[10]



Գրաֆիկ 4-ում ներկայացված է 2009 թվականին ՀՀ տնտեսության որոշ ճյուղերում գործող կազմակերպությունների բաշխվածությունը՝ ըստ ՓՄՁ հայտանիշի: Ըստ գրաֆիկում ներկայացված տվյալների՝ ՓՄՁ-ն կազմում է ընդհանուր ձեռնարկությունների քանակի 98.9-89.6%-ը: Այդ ցուցանիշը հատկապես մեծ է առևտրի և ծառայությունների ոլորտներում:

Գրաֆիկ 3-ը և գրաֆիկ 4-ը համադրելով՝ կարող ենք պատկերացում կազմել ՀՀ տնտեսության հիմնական ճյուղերում թողարկման ծավալների և գործունեություն ծավալող կազմակերպությունների քանակի մեջ ՓՄՁ մասնաբաժինների հարաբերակցության մասին: Այսպես՝ արդյունաբերությունում ձեռնարկությունների 95%-ը ՓՄՁ է, որն ապահովում է ճյուղում թողարկման միայն 23.6%-ը:

[10] *ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2009 թ. հունվար-դեկտեմբերին, ՀՀ ԱՎԾ, 2010:*

Շինարարության ոլորտում գործունեություն ծավալող ձեռնարկությունների 93.4%-ը ՓՄՁ է, որոնք գրավում են ճյուղի 37.2%-ը: Առևտրի և ծառայությունների ոլորտներում այդ ցուցանիշները համապատասխանաբար կազմում են 98.9%, 49.4% և 90.5%, 22%:

Գրաֆիկ 4

ՓՄՁ սուբյեկտների և խոշոր կազմակերպությունների բաշխվածությունը՝
ըստ տնտեսության ճյուղերի 2009 թ. (%)[11]



Վերոնշյալ ցուցանիշները ՀՀ-ում ՓՄՁ ներկա վիճակի մասին են պատկերացում տալիս, սակայն ոլորտի զարգացման տեմպերը դիտարկելու համար անհրաժեշտ է նաև այս ցուցանիշներն ուսումնասիրել ժամանակի մեջ: Ստորև աղյուսակ 3-ում ներկայացված են տնտեսության որոշ ճյուղերում թողարկման ծավալների և կազմակերպությունների ընդհանուր քանակի մեջ ՓՄՁ և խոշոր ձեռնարկությունների տեսակարար կշիռները 2005 և 2009 թվականներին:

Աղյուսակ 3-ից երևում է, որ դիտարկված ճյուղերում գործունեություն ծավալող կազմակերպությունների քանակի մեջ ՓՄՁ տեսակարար կշիռը համեմատաբար կայուն է եղել (փոխվել է 0.1%-ով), բացառությամբ արդյունաբերության ոլորտի, որտեղ ՓՄՁ ձեռնարկությունների քանակն ավելացել է՝ կազմելով ընդհանուրի 95%-ը: Սակայն պատկերը բոլորովին այլ է այդ ոլորտների թողարկման ծավալների մեջ ՓՄՁ մասնաբաժնի առումով (տե՛ս գրաֆիկ 5):

[11] *Նույն տեղում:*

Աղյուսակ 3

ՀՀ տնտեսության որոշ ճյուղերի թողարկման ծավալների և կազմակերպությունների ընդհանուր քանակի մեջ ՓՄՁ և խոշոր ձեռնարկությունների տեսակարար կշիռները 2005 թ., 2009 թ. (%)[12]

	ՓՄՁ				Խոշոր			
	կազմ. թիվ		Թող. ծավալ		կազմ. թիվ		Թող. ծավալ	
	2005	2009	2005	2009	2005	2009	2005	2009
Արդյունաբերություն	91,7	95,0	15,5	23,6	8,3	5,0	84,5	76,4
Գյուղատնտեսություն	93,5	93,4	9,1	20,5	6,5	6,6	90,9	79,5
Շինարարություն	89,5	89,6	41,0	37,2	10,5	10,4	59,0	62,8
Առևտուր	98,8	98,9	46,6	49,4	1,2	1,1	53,4	50,6

Գրաֆիկ 5

ՀՀ տնտեսության որոշ ճյուղերի թողարկման ծավալների մեջ ՓՄՁ տեսակարար կշիռները 2005 թ., 2009 թ. (%)[13]



[12] *ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2009 թ. հունվար-դեկտեմբերին, ՀՀ ԱՎԾ, 2010: ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2005 թ. հունվար-դեկտեմբերին, ՀՀ ԱՎԾ, 2006:*

[13] *Նույն տեղում:*

Արդյունաբերությունում ՓՄՁ տեսակարար կշիռը զգալի ավելացել է՝ 2005-ի 15.5%-ից 2009-ին դառնալով 23.6%: Ավելի քան 2 անգամ աճել է ՓՄՁ մասնաբաժինը գյուղատնտեսությունում՝ 9.1%-ից դառնալով 20.5%: Առևտրի բնագավառում ևս արձանագրվել է ՓՄՁ դերի աճ՝ 2005-ի 46.6%-ի փոխարեն 2009-ին կազմել է 49.4%: Իսկ շինարարությունում նկատվում է ՓՄՁ մասնաբաժնի նվազում՝ 41%-ից 37.2%:

Ներկայումս ՀՀ-ում ՓՄՁ զարգացմանը խոչընդոտում են մի շարք գործոններ՝ օրենսդրական դաշտի և ֆինանսավարկային քաղաքականության անկատարությունը, շուկայի մասին բազմակողմանի տեղեկատվության սահմանափակությունը և այլն: Մինչդեռ ՓՄՁ-ների զարգացման առավելություններն ակնհայտ են՝

• ՓՄՁ-ներն առավել արդյունավետ են օգտագործում տեղական հանքահումքային ռեսուրսները և նվազեցնում տնտեսության կախվածությունը ներմուծումից.

• նոր ՓՄՁ-ների ստեղծմամբ առավել արդյունավետ է ընթանում պարապուրդի մատնված և ոչ շահութաբեր խոշոր ձեռնարկությունների վերակառուցման և արդիականացման գործընթացը.

• ՓՄՁ-ներում համեմատաբար արագ և փոքր ծախսերով են ներդրվում նոր տեխնոլոգիաներն ու նորարարությունները.

• ՓՄՁ-ներում արտադրվող արտադրատեսակների մրցակցային հատկություններն ավելի արագ են փոփոխվում ներմուծվող համանման արտադրատեսակների նկատմամբ: Շատ հաճախ տեղական շուկաներում մղվող մրցակցային պայքարում դրանք հաղթող են դուրս գալիս և հաջողությամբ փոխարինում են ներկրվող ապրանքներին.

• ՓՄՁ-ները փոքր ներդրումների հաշվին և կարճ ժամանակահատվածում կարող են ապահովել զգալի թվով աշխատատեղեր՝ դրանով իսկ խթանելով զբաղվածությունը տնտեսությունում, էապես բարելավելով աշխատանքային շուկայում տիրող իրավիճակը և նպաստելով մի շարք սոցիալական հիմնախնդիրների լուծմանը.

• ՓՄՁ-ների զարգացումը նպաստում է հասարակության միջին խավի ձևավորմանն ու կայացմանը:

Ինչպես ՓՄՁ-ների, այնպես էլ տնտեսավարող սուբյեկտների գործունեությունը և զարգացման հեռանկարներն ամենից առաջ պայմանավորված են մակրոտնտեսական պայմաններով: Այդ պատճառով ՓՄՁ ոլորտի հեռանկարային զարգացման հիմնական պայմանը պետական կայուն մակրոտնտեսական քաղաքականության իրականացումն է, որը հետագայում կնպաստի տնտեսական հավասարակշռության հաստատմանը, հարկային պարտավորությունների, ինչպես նաև վարկային տոկոսադրույքի աստիճանաբար նվազեցմանը:

Հայաստանի Հանրապետությունում փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման հիմնական խնդիրը մեր կարծիքով պետք է լինեն ՓՄՁ-ների առանձնացված վիճակագրական համակարգի ձևավորումը և տվյալ ոլորտի

վերաբերյալ ամբողջական և լիարժեք տեղեկատվության ապահովումը, հարկային օրենսդրության կատարելագործումը, վարկային ռեսուրսների աղբյուրների ընդլայնումը և դրանցից օգտվելու մատչելիության ապահովումը, խորհրդատվական և տեղեկատվական համակարգի ձևավորումը, գործարարության ոլորտի անհրաժեշտ կադրերի պատրաստման և վերապատրաստման համակարգի ստեղծումը:

ПРОБЛЕМЫ ОРГАНИЗАЦИИ И РАЗВИТИЯ ПРЕДПРИНИМАТЕЛЬСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ В РА

ХАЧАТРЯН К. Г.

Резюме

Анализ нынешнего состояния предпринимательской деятельности указывает на то, что особенностями развития предпринимательства в РА являются малый удельный вес акционерных обществ в составе хозяйствующих субъектов и наличие неоправданных монополий в ряде отраслей экономики. В силу сказанного необходимо проводить активные мероприятия по развитию культуры корпоративного управления и бульшему совершенствованию конкуренции.